ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի մայիսի 11-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ պայմանագրում 2017 թվականի հուլիսի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1-	Պայմանագրի առարկա հանդիսացող հեղինակային հսկողության ծառայությունների հանձնման և ընդունման կարգի փոփոխություն:
Փոփոխության նկարագրություն -	ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ ծածկագրով պայմանագրի 3-րդ բաժինը՝ ծառայության հանձնման և ընդունման կարգը, խմբագրվել է (հանվել է հանձնման-ընդունման արձանագրությունը Պատվիրատուին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրվելու պայմանը):
Փոփոխության հիմնավորում-	ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի 7-րդ տող, 74-րդ կետի 3-րդ ենթակետ:
Փոփոխության առաջացման պատճառ N2-	Պայմանագրում նոր՝ 2.3.2 ենթակետի ավելացում:
Փոփոխության նկարագրություն -	Պայմանագրի 2.3.2 կետով ամրագրվել է, որ կատարողն իրավունք ունի պայամանգրով իրեն վերապահված գործառույթների կամ դրանց մի մասի իրականացումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանցել (լիազորել) այլ անձի:
Փոփոխության հիմնավորում-	ՀՀ քաղաքաշինության նախարարության 1998 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 143 հրամանով հաստատված <<Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման հրահանգի>> 3-րդ կետ:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

11.05.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան <<25>> <<07>> 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գողթն>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 11.05.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Պայմանագրի 2.3-րդ կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ խմբագրությամբ.

<<2.3.2 Պայմանագրով իրեն վերապահված գործառույթների կամ դրանց մի մասի իրականացումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանցել (լիազորել) այլ անձի:>>:

1.1.2 Պայմանագրի 3-րդ բաժինը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:>>:

Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև 11.05.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/11Հ ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012599, ՀՎՀՀ 02565827	<<Գողթն>> ՍՊԸ ք.Երևան, Վ.Վաղարշյան 14 բն.4 <<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>>ՓԲԸ Հ/Հ 1570023024930100 ՀՎՀՀ 00010182
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	_____ Ա. Հովակիմյան (ստորագրություն) Կ.Տ.